բարդ կառուցվածքների խումբը, որտեղ նկատվում է Վահանավանքի ճարտարապետության ազդեցությունը, օղակված է հաստ պարիսպներով։ Ներս մտնելու համար կար միայն մի դարպաս, այժմ իր փեղկերից վաղուց զրկված մի լայն բացվածք։ Հաստ և հիմնավորապես ու մեծ խնամքով արված պատերով է շրջապատված եղել և Կարմիր վանքը՝ Ղրզել վանքը, այժմյան Արծվանիկ՝ հին Երիցավանիկ գյուղին կռնակ ծառայող լեռան գագաթին, որը իր հիմնադրի անունով կոչվում էր Երիցվանք։ Գյուղին էլ այսօր տեղացիք տալիս են Երիցվանիկ անունը, ոչ թե Արծվանիկ, որը ռուսական քարտեզագիրները սխալ փոխ են առել թուրք բնակիչներից։ «Եւ էր վանքն այն տեղի գեղեցիկ և զարմանատիպ ի վերայ բարձրաւանդակի միոջ շինեալ եկեղեցի... և պարսպեալ մեծամեծ քարամբք, և ի ներս ի պարսպին խցկունք թուով միայն 40»[41]։ Վանքի պաշտպանությանը ծառայում էին ոչ միայն նրա պարիսպները, այլև անմիջապես արևմուտքից հրապարակը հատող ուղղահայաց լեռնակողը, որը գրեթե անվերելանելի է։ Այդ լեռնակողի կրծքի միջին բարձրությունով ձգվում է խորացած գոտու նման մի երկարացած քարանձավ՝ առջևից ամբողջովին բաց, վերևից լավային շերտով լայն ծածկված։ Այդ քարանձավը հաճախ պատսպարել է իր մեջ Երիցվանիկի գյուղացիներին։ Նրա մի անկյունում ցույց են տալիս մի խցիկ, որտեղ իբր թե ճգնավորական կյանք է վարել միաբաններից մեկը։ Այդ փոքր քարայրը մինչև վերջին ժամանակներս ուխտատեղի էր։

Նույնպես պարսպապատ էր և Գորիսից դեպի հյուսիս մոտ քսան կիլոմետր հեռավորության վրա գետեղված Միծեռնավանքը։ Նրա պարիսպները սակայն ընդգրկում են փոքրիկ հրապարակ և կառուցված են շատ պարզ ձևով։ Դա ավելի շուտ մի տնտեսության բակը օղակավորող շրջապատ է, քան թե ամրություն։ Բոլորովին հակապատկեր են կազմում այն հուժկու կառուցումները, որոնցով շրջանի ամենամեծ և ամենագեղեցիկ, տեղական պատմական-քաղաքական և կուլտուրական կյանքի մեջ վճռական դեր կատարած, բարեպաշտների մեծաքանակ նվիրաբերություններով ճոխացած Տաթևի վանքն էր իրեն ապահովում ռազմական վտանգների ժամանակ։ Տարանցիկ բանուկ ճանապարհին հիմնադրված այս կայանը, որով Սատանի կամրջի օգնությամբ հնագույն դարերից կապ էր պահպանվում Որոտնա (Բազարչայ) գետի երկու ափերի միջև, բազմած է մի ապառաժոտ խոր ձորի սեպ ժայռերի գլխին։ Այդ ժայռերով ոչ մի մարդկային ոտք չի կարողացել վեր ելնել խորխորատի անդընդից։ Վանահոր բնակարանը և խուցերի մի մասի պատերը կազմում են այդ ձորի կողի անմիջական շարունակությունը՝ իրենց պատշգամբներով ձորի գլխին կախ ընկած։ Այդ ձորը փորել է մի վտակ, որը Սատանի կամուրջից ներքև թափվում է Որոտնա գետի մեջ, նրա հետ կազմելով մի բարձրադիր հրվանդան։ Հրվանդանի մյուս կողմը գոտեվորված է հաստ պարսպով, որի պաշտպանական հարմարությունները ուժեղացված են չորս աշտարակներով։ Կառուցողը առանձին ուշադրություն է դարձրել դարպասը պաշտպանելու վրա և այդտեղ գետեղել է և՛ ամենամեծ, և՛ ամենագեղեցիկ ու նրբատաշ քարաշար աշտարակը[42]։ Արևմտյան պարիսպի մեջ բացված դուռը նոր կառուցվածք է։ Ամրությունների ամբողջությունը տալիս է վանքին պատկառելի բերդի տեսք։

---

[41] Օրբելեան Ստ., անդ., գլ. Ի, էջ 75։

[42] Ալիշան Ղ., Սիսական, էջ 242—244։